ԲԱՔՎԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1920-1990 ԹԹ.)

Արմինե Մուքոյան

2020

Հայերը Բաքվում

Դեռևս 500թ. Արցախի թագավոր Վաչագան Բարեպաշտը հրամայում է կառուցել Բաքվի առաջին հայկական եկեղեցին, որի մասին, ցավոք, քիչ բան է հայտնի: VII դարի հայ աշխարհագրագետ Անանիա Շիրակացին ի թիվս Փայտակարան նահանգի 12 շրջանների հիշատակում է նաև Ալտի-Բագավանը, որը արևելագետ Քերովբե Պատկանովը նույնացնում է Բաքվի հետ: Արևելագետ-ակադեմիկոս Վասիլի Բարտոլդը, հղում անելով XIV դարի պարսիկ պատմիչ Համդալլահ Ղազվինիին, խոսում է այստեղ հայկական եկեղեցու հնարավոր գոյության մասին, իսկ XV դարի արաբ ճանապարհորդ Ռաշիդ ալ Բաքուվին գրում է, որ Բաքվի (Բաքույա) բնակչության մեծ մասը քրիստոնյա է: 1789թ. սյունեցիներ Մարկոս և Զոհրաբ Թարումյանների, ինչպես նաև շուշեցիներ Հովհաննես և Կարապետ Թումանյանների ջանքերով Հին Թաղամասում հիմնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Ժամանակի ընթացքում Բաքվի հայերի թիվը ավելի է ստվարանում: 1851թ. 7431 բնակիչ ունեցող Բաքվում հայերը կազմում են բնակչության 5,5%-ը, իսկ արդեն 1897թ. մարդահամարի տվյալներով Բաքվի բնակչության ընդհանուր թիվը 111.904 է, որից հայ՝ 17%-ը: Հայերն ապրել են առանձին թաղամասերում ու քաղաքի մերձակա բնակավայրերում, լայն մասնակցություն են ունեցել նաև քաղաքի կառավարչական պաշտոններում: Հայերն իրենց ներկայությամբ նպաստում էին քաղաքի առաջընթացին բոլոր ոլորտներում՝ սկսած մշակույթից և վերջացրած առևտրով:

20-րդ դարասկզբին թաղամասային սահմանները վերացել են. հայաշատ են մնացել Հայկաշեն (Արմենիքենդ) և Զավակզալնի կոչված թաղամասերը, ինչպես նաև քաղաքի կենտրոնը: 1970-ի տվյալներով՝ Բաքվի 1, 27 միլիոն բնակչից ավելի քան 200 հազարը հայ էր: 1980-ականների վերջին այստեղ բնակվել է շուրջ 300 հազար հայ: 1990-ի հունվարի 13-19-ին Բաքվում կազմակերպված հայերի ջարդերից հետո դարավոր հայ համայնքը այլևս գոյություն չունի: Հայերը հեռացել են քաղաքից՝ այնտեղ թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը:

Այս փաստերը, որոնք այսօր հանգամանորեն թաքցվում են ադրբեջանական իշխանությունների կողմից, վկայում են, որ Բաքուն մինչև իսկ 1990-ականները ադրբեջանական չի եղել: Ուստի հարց է առաջանում, թե ուր էին մահմեդականները, երբ իրենց մայրաքաղաքը ծաղկեցնում էին հայերը:

Հայ ժողովրդի դեմ Թուրքիայի ծրագրած և իրականացրած ցեղասպանությունը իր շարունակությունն է ունենում Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում, որի իրագործման համար Թուրքիան արշավանք է ձեռնարկում դեպի Անդրկովկաս: Սա հետապնդում էր մի քանի նպատակ , այն է՝ գերմանացիների հետ տիրանալ Բաքվի նավթին, դուրս մղել Ռուսաստանը Կովկասից, միանալ Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի մահմեդականներին և իրագործել պանթյուրքիզմի քաղաքականությունը, որի մեջ էր մտնում նաև հայերի ոչնչացումը:

Բաքվի հայերը ծավալել են տնտեսական, առևտրական ու շինարարական լայն գործունեություն, աչքի են ընկել հատկապես նավթարդյունաբերության ասպարեզում: Բաքվում առաջին արդյունաբերական նավթահորը, որն սկսել է գործել 1869-ին, պատկանել է Ի. Միրզոևին:

Բաքվի հայ բնակչությունը խորհրդային իշխանության տարիներին

1920 թվականի ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում են խորհրդային կարգեր. Թվում էր թե խորհրդային իշխանության վարած սոցիալական քաղաքականությունը երկրորդ պլան էր մղել ազգամիջյան հակասությունները և Բաքվի հայերը հնարավորություն էր ստացել գոյատևելու, սակայն հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում թե' մուսավաթականների և թե' նրանց հաջորդած բոլշևիկ պարագլուխների գործելակերպը նույնն էր: Մուսավաթական Ադրբեջանի հայատյաց ծրագրերը փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին, որին օժանդակում էր քեմալական Թուրքիան:

Քեմալականների և բոլշևիկների միջև Հայաստանի և հայ ժողովրդի դեմ ստեղծված ռազմաքաղաքական դաշինքի առկայությամբ և Բաքվում թուրք սպաների անմիջական մասնակցությամբ կազմվում են առանջին գնդեր Ադրբեջանի հայ բնակչության նկատմամբ բռնությունների ու հալածանքների նպատակով. Պետականացվում, կողոպտվում են հայապատկան ձեռնարկություններ, շինություններ, բռնագրավվում է Բաքվի հայոց թեմի առաջնորդարանն ու կոնսիստորայի ամբողջ գույքը, ազգայնացվում է հայերին պատկանող նավերն ու նավային ընկերությունները, ցիր ու ցան արվում հայկական գրադարաններ, դադարեցվում հայրենակցական միություններ, ազգայնացվում հայոց նավթահանքերըը, գործարանները, առևտրական հաստատությունները, հայապատկան բոլոր սեփականությունները: Այս ամենից զատ ձերբակալվում և գնդակահարվում են հայ հասարակական գործիչները, հատկապես ՀՅԴ գործիչները: Այս ամենի դեմ Հայաստանի Հանրապետության բողոքները Մոսկվա, մնում են անարձագանք:

Ադրբեջանում հայահալած քաղաքականությանը նպաստեց Բաքվում 1920 թ: Կոմինտերնի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, ուր ընթերցվում է Էնվերի հայտարարությունը. «Մենք գտնում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»:

Այստեղ տեղին է փաստել, որ մինչև 1918թ. «ադրբեջանցի» հասկացություն չի եղել, բոլորը նրանց կոչել են թաթարներ կամ մուսուլմաններ: Ռուս կովկասագետ Ն.Զեյդլիցը 1870թ. գրել է. «Բաքվի նահանգի թաթարները ծագում են զանազան թուրքական ցեղերից, որոնք այս երկրամաս են տեղափոխվել սելջուկների, մոնղոլների, Սև ու Սպիտակ ոչխարավորների, թուրքմենների և սեֆյանների ասպատակությունների ու երկրամասին տիրելու օրոք: Այդ տարբեր ցեղերը, միախառնվելով երկրամասի նախկին բնակիչների հետ ինչպես Արևելյան Անդրկովկասում, այնպես էլ Պարսկաստանի հյուսիսային մասում, կազմավորեցին թյուրք լեզու՝ թուրքերենի (օսմանյան թուրքերի), կումիկերենի, նողայերենի և ջաղաթայերենի միջինը:

...Ատրպատականի թաթարների նոր ժողովրդի կազմի մեջ մտան մարդկային տոհմի զանազան ցեղախմբերի ներկայացուցիչները» :

Այսպիսով, այդ հայտարարությունը նշանակում էր Արևելյան Այսերկովկասի տեղաբնիկ ժողովուրդների ֆիզիկական ոչնչացում, էթնիկական զտում և ուծացում:
Իբր խորհրդային կարգերի հույսով, հայ գաղթականները վերադառնում էին Բաքու, սակայն հայկական դատարկված գյուղերն արդեն դիտավորյալ վերաբնակեցրել էին թաթարներով, Ադրբեջանի ղեկավարությունը ամեն արգելք գործադրել է հայերի իրենց նախկին բնակավայրեր վերադառնալը խոչընդոտելու, արգելելու:
Ադրբեջանի իշխանությունները արգելքներ ստեղծեցին նաև հայաստանի տարբեր շրջաններից աշխատանքի բերումով Բաքվում գտնվող հայերի վերադառնալու խնդրում: Հատկապես արգելքներ էին ստեղծում զանգեզուրցի, արցախցի, և նախիջևանցի հայերի վերադարձի կապակցությամբ: Նպատակ ունենալով Խորհրդային Հայաստանից զավթելու Արցախը, Զանգեզուրն ու Շարուր-Նախիջևանը:

Հայաստանի Հանրապետության բողոքներից հետո, երկարատև տառապանքներից հետո, 1923 թվականին սակավաթիվ հայ գաղթականների թույլատրում են վերադառնալ իրենց նախկին բնակավայրեր: Գաղթականների մի մասը հեռացավ Վրաստան՝ Թիֆլիս, որտեղից վրացական իշխանությունները նրանց հարկադրեցին հեռանալ Հյուսիսային կովկաս և Հայաստան:

Տեղին է նշել, որ դեռևս ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի տնտեսական և քաղաքական խոշոր կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, կրթական-գիտական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ մուսավաթականների՝ 1918 թ. Բաքվում իրականացրած հայկական ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թվականներին իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը, իսկ Թիֆլիսն իր 100 հազարից ավելի հայությամբ ոչ միայն Անդրկովկասի, այլ ամբողջ ԽՍՀՄ-ում ամենամեծաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքն էր:

Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ մեջբերում եմ պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանի «Բաքու քաղաքի հայության պատմությունը» պատմաժողովրդագրական ուսումնասիրությունից։

ԱԽՍՀ ստեղծումից հետո, Արևելյան Այսերկովկասի տեղաբնիկ ժողովուրդների ուծացման ճանապարհով, Ադրբեջանը պետական մակարդակով որդեգրում է ճնշման ու հալածանքների քաղաքականություն։ Թվում էր, թե խորհրդային իշխանությամբ պետք էր համերաշխություն ձևավորվեր, սակայն այդպես չէր, հին ցարական ազգայնական կարգերի մնացորդները դեռ ուժեղ էին։
Ադրբեջանում պետական մակարդակով որդեգրած հայահալած քաղաքականությունը սկսվեց կրթության ոլորտից. Հայկական դպրոցներ ավարտածին չէին ընդունում կամ շատ դժվարությամբ էին ընդունում ԲՈՒՀ, հայոց լեզու, պատմություն արգելված էր դպրոցներում։
Հայահալած քաղաքականությունը դրսևորվեց նաև ՀՅԴ կուսակցության գործունեության դադարեցմամբ, անդամների զանգվածային ձերբակալություններ սկսեցին։
Խորհրդային կարգերի հաստատումից հետո նոր լարված հարաբերություններ սկսվեցին Ադրբեջանի իշխանությունների և հայ ազգային-կրոնական կյանքը տնօրինող հայոց թեմերի միջև. Փակվում են հայկական եկեղեցիները, արգելվում եկեղեցական ծիսակատարումները, պղծվում հայկական գերեզմանատները, ավերվում հայկական հուշարձանները
Ադրբեջանում մուսավաթական կառավարության ժամանակաշրջանում և դրան հաջորդող խորհրդային իշխանության հաստատումից հետո տեղի ունեզուրկ հայությունից մեծ ջանք էր պահանջվում պահելու իրենց ինքնությունը։

Ադրբեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով տարիներ շարունակ Արցախի տեղաբնիկ հայության նկատմամբ իրականացված սոցիալ-տնտեսական, քաղաքական և բարոյահոգեբանական ճնշումները ուներ մեկ նպատակ՝ հայաթափման ճանապարհով վերջնականապես բռնազավթել Արցախը։

Արցախի հայաթափման նպատակով իբրև աշխատանքի համար արցախցիներին հարկադրաբար դուրս էին մղում հայրենի բնօրրանից դեպի Բաքու և Սումգայիթ։

Արդեն 1930-ական թվականների վերջին մարդահամարի տվյալներով հայ բնակչության թիվը գյուղական շրջաններից, հայության արտահոսքի պայմաններում, շարունակ աճել է։ 1930-1950-ական թվականներին Բաքվի բնակչությունը համալրվել է հիմնականում արցախցիներով։ Հայերը բնակչության թվով եղել են երկրորդը ռուսներից ու ադրբեջանցիներից հետո։
Բաքվում հայ բնակչության թիվը նվազել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

1949 թվականին ԱԽՍՀ-ում հայերի նկատմամբ հայահալած քաղաքականության նոր սկիզբ է դրվում։ Ադրբեջանը օգտվում է ԽՍՀՄ կառավարության որոշումներով հանրապետություններում իրականացվում են բռնություններ և տեղահանություն, որից Ադրբեջանը օգտվում է և սկսում անհարկի մեղադրանքներ առաջադրել հայերին և աքսորում Ալթայի երկրամաս։ Աքսորյալներին հիմնականում մեղադրում էին ՀՅԴ անդամ լինելու մեջ։

1959 թ. հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով՝ Բաքվում և քաղաքային բնակավայրերում, ինչպես նաև Բաքվի քաղխորհրդին ենթակա գյուղական վայրերում, 987.228 բնակչությունից հայերի թիվը 170.086 էր և կազմում էր ամբողջ բնակչության 17,2%-ը։ Հայերը թվով երկրորդն էին ռուսներից և ադրբեջանցիներից հետո։
Բաքվում հայերի և տեղաբնակ ժողովուրդների նկատմամբ ուծացման և խտրական քաղաքականությունը գնալով ավելի ակնհայտ դրսևորումներ է ստանում։

1959 թ. Մարդահամարից 11 տարի անց, 1970-ին թ. Հունվարին անցկացված համամիութենական մարդահամարի տվյալներով, Բաքվում՝ քաղաքային և ենթակա բնակավայրերում 1.265.515 բնակչությունից հայերին իրենց թվով երրորդն էին ադրբեջանցիներից և ռուսներից հետո։ Այն պայմանավորված էր Ադրբեջանի ղեկավարության կողմից տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ իրականացվող

խտրական քաղաքականությանբ և ձուլման գործընթացով՝ ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության լռելյայն փույտվությամբ և համաձայնությամբ։
Բռնի ադրբեջանականացման գործընթացում, տեղաբնիկներից հայերը որպես դժվար տարրալուծվող ազգ, դարձել էր Ադրբեջանի թուրքացման քաղաքականության հիմնական խոչընդոտը և հիմնական թիրախը։ Հայերը սկսել էին համարվել «ներքին թշնամի»։ 1950-1970 թթ-ին հակահայ քաղաքականությունը դառնում է մասշտաբային, փակվում են հայկական դպրոցները. 1930-ական թվականներից սկսած գործել են 87 հայկական դպրոցներ, վերջին դպրոցը փակվել է 1983թ.-ին։ Թակվեցին մշակույթի օջախները, արգելվեցին ազգային միջոցառումները, Բաքվի հայ բնակչությունը զրկվեց իր ազգային հիմքից։

Ադրբեջանական իշխանությունների էթնիկ, կրոնական և լեզվական իրավունքների ոտնահարման քաղաքականության հետևանքով Բաքվի հայերի շրջանում տեղի էր ունենում մայրենի լեզվի դիրքերի աստիճանական կորուստ, ինչի պատճառով հայ երեխաները կրթություն էին ստանում ռուսական դպրոցներում, հայկական ազգանունները հաճախ գրանցվում էին ռուսական վերջածանցներով։
Շարունակվող հայահալած քաղաքականության պայմաններում Բաքվից հայության արտագաղթը մեծ մաշտաբների է հասնում 1980-ականներին։
1980-1989թթ։ Բաքվում բացարձանք հալածանք սկսվեց հայ մտավորականության նկատմամբ։ Հետապնդվում և ազգայնականության կեղծ մեղադրանքներով հալածվում և աշխատանքից հեռացվում էին Արցախի և Նախիջևանի պատմությամբ հետաքրքրվողները։
Ադրբեջանում հայ բնակչության իրավազրկելու, ճնշելու և հալածելու քաղաքականությունը դրսևորվեց 1988 թ փետրվարին 27-29-ին, Սումգայիթում։

Պետական մակարդակով կազմակերպվեցին և գործադրվեցին ցեղասպանության բոլոր մեթոդներն ու ձևերը։ Ոճրագործությունը ծրագրավորված է եղել նախօրոք։ Այդ են վկայում ջարդարարների մոտ հայերի բնակարանների ցուցակների առկայությունը, նախապես մշակված սցենարը և դերերի բաժանումը (սպանություն և ջարդեր

իականացնողներ, թալանողներ, ունեցվածք ոչնչացնողներ, հանցագործության հետքերը վերացնողներ), ոճիրն իրականացնելու համար արտադրամասերում մետաղաձողերի և այլ գործիքների պատրաստումը, թմրանյութերի և ոգելից խմիչքի բաժանումը: Բացի այդ, անջատված է եղել հայերի հեռախոսային կապը, միտումնավոր չեն գործել ՆԳ և շտապ օգնության ծառայությունները, հայերի տեղերը բացահայտելու համար գործի է դրվել պայմանական և ազդանշանային համակարգ և այլն:

Երեք օր շարունակվող սպանդի արդյունքները զարհուրելի էին, ջարդարարների գործողությունները՝ անօրինակ դաժան. ԽՍՀՄ պաշտոնական տվյալներով մի քանի տասնյակ, իսկ ոչ պաշտոնական՝ հազարից ավելի սպանվածներ, որոնց մեծ մասը խոշտանգումներից ու կտտանքներից հետո ողջակիզված, հազարավոր վիրավորներ, հարյուրավոր բռնաբարվածներ, այդ թվում՝ մեծ թվով անչափահասներ:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանության թողտվությամբ Սումգայիթյան ջարդերին խոշտանգվելով, կտտանքների ենթարկվելով զոհ է գնում 500-1000 հայեր, որոնցում կանայք, երեխաներ և ծերեր:

Սումգայիթում պետական մակարդակով իրագործված հայերի ցեղասպանությունը ԽՍՀՄ կենտրոնական իշխանության կեղմից քաղաքական գնահատականի չարժանացավ:

Սումգայիթում հայերի ցեղասպանությունից հետո հայահալած քաղաքականությունը շարունակվեց Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերում: Սումգայիթյան դեպքերից հետո սկսվում է Հայ բնակչության զանգվածային բռնագաղթը:

Հայ բնակչության տեղահանման ժամանակ ադրբեջանական իշխանությունների կողմից գործադրվում էին հարկադրանքի բոլոր միջոցները:

Ադրբեջանական իշխանությունների կողմից բռնարարքների գործադրման հետևանքով հայ բնակչությունը զանգվածաբար արտագաղթեց իր բուն հայրենի տարածքներից՝ Գանձակից, Շամխորից, Քարհատից, Նախիջևանում մնացած միակ հայկական գյուղից՝ Զնաբերդից և այլ շրջաններից:

Պետական մակարդակով կազմակերպված հայկական կոտորածները սկսվեցին 1990 թվականի հունվարի 13-ին Աբդուլրախման Վեզիրովի հակահայ ելույթով:

Բաքվում հայերի ջարդերը կազմակերպվել է պետական մակարդակով։
Բաքվում 1990-ի հունվարին հայերի ցեղասպանությունը սկիզբ դրեց Ադրբեջանից հայերի բռնագաղթի չորրորդ փուլին։

Ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով Բաքվի հայությունը զրկվեց իր բնօրրանը համարվող քաղաքից և ունեցվածքից։ Ողջ մնացած հայերը ցվրվեցին աշխարհով մեկ։

Չնայած նրան, որ Ադրբեջանի կողմից փորձ է արվում կոծկել և խուսափել Սումգայիթի, Բաքվի, Գանձակի և հայաբնակ այլ վայրերի հայերի ցեղասպանության իրողությունից, այնուամենայնիվ, ըստ միջազգային իրավունքի Ադրբեջանը չի կարող խուսափել այդ հանցագործությունների իրավաքաղաքական պատասխանատվությունից։

Փաստերը անհերքելի ապաուցում են, որ Ադրբեջանում իրականացված հայերի ցեղասպանության նպատակը եղել է ոչ միայն նրանց տեղահանությունը, այլև ֆիզիկական բնաջնջումը։

Չնայած միջազգային հանրությունը դեռևս Սումգայիթի ոճրագործությունը չի ճանաչել որպես ցեղասպանություն, բայց այն դատապարտել են Եվրոխորհրդարանը (1988 թ.), ԱՄՆ Սենատը (1989 թ.) և Արգենտինայի խորհրդարանը։
Բաքվի հայերի տնտեսական գործունեությունը

Բաքվի հայերը աչքի են ընկել հատկապես նավթարդյունաբերության ասպարեզում։ Բաքվում առաջին արդյունաբերական նավթահորը, որն սկսել է գործել 1869-ին, պատկանել է Ի. Միրզոևին։
19-րդ դարի վերջին, կարճ ժամանակամիջոցում, Բաքվում ու նահանգում կազմակերպվել են մի շարք հայկական ընկերություններ։ Հայ գործարարներն իրենց գործիմացության ու եռանդի շնորհիվ վաստակել են մեծ հարստություն և ազդեցություն՝ կարևոր դեր խաղալով ամբողջ նահանգի տնտեսության զարգացման

գործում։ «Միրզոն և եղբ.», «Մանթաշև և ընկ.», «Ղուկասով եղբ.», «Լիանոզով և ընկ.», «Արաֆելով և ընկ.», «Փիլիպոսյանց եղբայրներ», «Աստվածահաճո ձկնարան», «Արամազդ», «Արարատ», «Մասիս», «Աստղիկ», «Սյունիք», «Արալո-Կասպիական» և հայերին պատկանող տասնյակ այլ ընկերություններ զբաղվել են գերազանցապես նավթարդյունաբերությամբ, ունեցել սեփական փոխադրամիջոցներ (այդ թվում՝ ծովային), իրենց արտադրանքն արտահանել մոտիկ ու հեռու շուկաներ։ Հովհաննես Մինասի Միրզոյանի կողմից է հիմք դրվել Բաքվի նավթաարդյունաբերությանը։ Նա առաջինն էր, ով 1868 թվականին հիմնեց կերոսինի երկու գործարան և առաջինն էր, ով արտահանեց կերոսինը։ Միրզոյանի ջանքերով 1871 թվականին հիմնվեց առաջին արդյունաբերական հորատանցքը, իսկ 1872 թվականին՝ երկրորդը[8]։ Միրզաբեկյանները զբաղվել են ծխախոտագործությամբ, Մայիլյան եղբայրները, Կամոնները, Փիթոնները, Վենեցովները նշանակալի դեր են խաղացել ձկնարդյունաբերության զարգացման գործում, Արունյանները՝ գինեգործության, Փիլիպոսյանները՝ շոկոլադագործության։ Բաքվի առաջին բանկերի (Թիֆլիսի առևտրական բանկի մասնաճյուղ, Փոխադարձ վարկի ընկերություն) հիմնադիրները եղել են հայեր։ 1907-ին Բաքվում արտադրվող 448 միլիոն փութ նավթի 54,4 տոկոսը, 1917-ին՝ 368 միլիոն փութի 53 տոկոսը պատկանել է հայերեին։ 1907-ին քաղաքում գործող 154 ընկերություններից 89-ը եղել են հայկական։ Բաքվում Անդրկովկասի շոկոլադի առաջին ֆաբրիկան 1891 թվականին հիմնել են Փիլիպոսյանց եղբայրները։ Այն միակ ձեռնարկությունն էր ամբողջ Կովկասում, որ արտադրում էր ընտիր շոկոլադ՝ շոկոլադե–մինոյն ու շոկոլադե կոնֆետներ, ինչպես նաև բարձրորակ կարամելի զանազան տեսակներ։ Արտադրանքը տարբեր միջազգային ցուցահանդեսներում արժանացել է 3 ոսկե մեդալի[9]։ Քաղաքի խոշորագույն առևտրական տունը պատկանել է Թումանյան եղբայրներին։ Հայերը զգալի կշիռ են ունեցել տնտեսության նաև այլ՝ մասնավորապես մետաքսագործության, բամբակագործության ճյուղերում։ Բաքուն դարձել էր Անդրկովկասի հայերի հասարակական-քաղաքական և մշակութային կենտրոններից մեկը։

Հայկական եկեղեցին Բաքվում

1863-69-ին Բաքվի հայերը կառուցել են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Կույսի աշտարակի մերձակայքում)։ Այն մի քանի անգամ նորոգվել ու վերակառուցվել է. եկեղեցուն կից պահպանվում էին 18-19-րդ դարասկզբի թվակիր հայերեն արձանագրություններով տապանաքարեր։ Խորհրդային իշխանության տարիներին այն միակ գործող հայկական եկեղեցին էր ամբողջ Ադրբեջանում։ 1895-ին օծվել է Բաքվի հայկական գերեզմանատան Սուրբ Հարություն մատուռ-եկեղեցին, 1911-ին՝ Բաքվի հայության միջոցներով կառուցված Ս. Թադեոս և Բարդուղեմեոս եկեղեցին (ունեցել է 1500-տեղանոց աղոթասրահ, ընդարձակ նախասրահ և աչքի է ընկել վեհ ճարտարապետությամբ ու շքեղ կահավորմամբ)։ Քանդվել է 1930-ականներին, տեղում կառուցվել է Բաքվի կոնսերվատորիայի շենքը։ Հայկաշեն թաղամասում մինչև 1920-ականները գործել է Ս. Թարգմանչաց եկեղեցին։

Հայկական դպրոցն ու հայ մշակութը Բաքվում

Բաքվում առաջին հայկական դպրոցը 1860-ին բացվել է Ա. Տեր-Ղևոնդյանի ջանքերով։ 19-րդ դարավերջին գործում էր հայկական 12 դպրոց։ 1903-ի մարդահամարի տվյալներով՝ բաքվեցիների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թվի 1,2 տոկոսը ռուսներ էին, 1,5-ը՝ հայեր, իսկ թաթարները պարսիկների հետ կազմել են 0,1 տոկոսը։ 1930-50-ական թվականները գործել են 80 հայկական միջնակարգ դպրոցներ, մանկավարժական տեխնիկում, հայկական ֆակուլտետներ՝ Բաքվի համալսարանում ու մանկավարժական ինստիտուտում։ Վերջին հայկական ուսումնական հաստատությունը (դպրոց) Բաքվում փակվել է 1983-ին։

Համայնքում գործել են թատերական խմբեր, երաժշտական համույթներ, գրադարան-ընթերցարաններ, ակումբներ, նաև տպարաններ, որտեղ հրատարակվել են հայերեն պարբերականներ, դասգրքեր, գրականություն և այլն։

Հայ համայնքի հասարակական կյանքը կազմակերպել են բազմաթիվ բարեգործական, մշակութային, երիտասարդական կազմակերպություններ։ Բաքվում գործել են հայ ազգային կուսակցությունները (ՀՅԴ, ՍԴՀԿ), Ռուսական կայսրությունում գործող գրեթե բոլոր ազդեցիկ կուսակցությունների (ՌՍԴԿ, ՌՍԴ(բ)Կ և այլն) հայ ներկայացուցիչները։ Համայնքի ներքին ազգային կյանքը, այլ կազմակերպությունների հետ, տնօրինել է Հայոց կենտրոնական ազգային բյուրոյի ներկայացչությունը, 1917-ից՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը (կազմալուծվել է 1920-ին)։ 1905-ի փետրվարին, երբ ցարական իշխանությունների հրահրմամբ թաթարները (ադրբեջանցիները) սկսել են կոտորել անզեն հայերին դաշնակցականները կազմակերպել են ինքնապաշտպանության ջոկատներ՝ Նիկոլ Դումանի գլխավորությամբ։

Գրականության ցանկ

Գևորգ Ստեփանյան։ «Բաքու քաղաքի հայության պատմությունը» պատմաժողովրդագրական ուսումնասիրություն

Հովհաննես Ալեքսանյան. Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն ադրբեջանական եվ

Վրացական ԽՍՀ-ներում (1920–30-ական թվականներ)

Սումգայիթի ջարդեր

https://hy.wikipedia.org/wiki/Սումգայիթի_ջարդեր

Հայերը Բաքվում

https://hy.wikipedia.org/wiki/Հայերը_Բաքվում